ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի, 2-րդ մասի <<բ>>, <<ե>>, <<զ>> ենթակետերի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի, 1.12-րդ կետի <<բ>> ենթակետի և 1.16-րդ կետի <<ա>> ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված <<Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն>> պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության>> 46-րդ կետի 1-ին, 6-րդ և 9-րդ կետերի պահանջներով

կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչության Սևանի բաժնի պետի 09.11.2011 թ. թիվ 95/19-6072 գրությամբ նշված փաստերը Սևանի Մ. Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոցում ուսումնասիրելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով:

   Մուշեղյան Յու. – հանձնաժողովի նախագահ, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետի տեղակալ

   Հոդաբաշյան Վ.- մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ

   Պողոսյան Վ. - մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ

   Մնացականյան Վ.- մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի վարիչ

   Մալխասյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի մասնագետ

   Մելքոնյան Գ. - մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարության վաժնի գլխ. մասնագետ
2. Հանձնաժողովին (նախագահ՝ Յու. Մուշեղյան)՝ ուսումնասիրության արդյունքների մասին տեղեկատվությունը ներկայացնել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին՝ ուսումնասիրության ավարտից հետո՝ երեքօրյա ժամկետում:
3. Կարգադրության կատարման հսկողությունը վերապահել մարզպետի տեղակալ Ա. Ղուկասյանին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ն. ՊՈՂՈՍՅԱՆ